

**19.10.2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ
ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

30.09.2019 19:35



Հարգելի փաստաբաններ,

Սույնով Դուք ծանուցվում եք այն մասին, որ **2019 թվականի հոկտեմբերի 19-ին, ժամը 09⁰⁰-ից մինչև 18⁰⁰-ն** ՀՀ փաստաբանների պալատի՝ Երևան քաղաքի Զաքյան 7-2 հասցեում գտնվող վարչական շենքի 2-րդ հարկի սրահում, հեռակա կարգով (առանց ընդհանուր ժողովի գումարման) տեղի է ունենալու Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով՝ հետևյալ օրակարգային հարցերով.

- 1) Փաստաբանի վարքագծի կանոնագրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ շարադրելու) մասին.**
- 2) Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ շարադրելու) մասին.**
- 3) «Փաստաբանի օր» սահմանելու մասին:**

Օրակարգային հարցերով **քվեարկությունը** սկսվում է **2019 թվականի հոկտեմբերի 19-ին, ժամը 09⁰⁰-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը 18⁰⁰-ին:**

Յուրաքանչյուր փաստաբան **քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:**

Քվեարկության օրը պետք է ներկայանալ **անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով:**

Քվեարկության գաղտնիությունը քվեարկող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև՝ պարտականություն:

Ընդհանուր ժողովի հետ կապված անհրաժեշտ այլ տեղեկություններին կարող եք ծանոթանալ ՀՀ փաստաբանների պալատի www.advocates.am կայքէջից:

Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի նախագահի 30.09.2019թ. թիվ 387-Լ որոշումը

Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով հրավիրելու մասին ծանուցումը

Բեռնել ««Փաստաբանի օր» սահմանելու հարցով փաստաբանների առաջարկներն ընդունելու մասին» կարգը

Բեռնել ՀՀ ՓՊ խորհրդի 27.09.2019թ. թիվ 18/10-Լ որոշումը

Բեռնել ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության փոփոխությունների և լրացումների նախագիծը

Բեռնել ՀՀ ՓՊ խորհրդի 27.09.2019թ. թիվ 18/11-Լ որոշումը

Բեռնել Փաստաբանի վարքագծի կանոնագրքի փոփոխությունների և լրացումների նախագիծը

Հայաստանի Հանրապետության

փաստաբանների պալատի

աշխատակազմ

Առաջարկվող նորություններ



10.10.2019 Հ Ծ Ե Ց ՈՒ Մ` ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ 19.10.2019 ԹՎԱԿԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՄԱՍԻՆ



10.10.2019 «ՓԱՍՏԱԲԱՆԻ ՕՐ» ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՀԱՐՑՈՎ 19.10.2019թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ (ԱՄՍԱԹՎԵՐԸ)



11.10.2019 «ՓԱՍՏԱԲԱՆԻ ՕՐ» ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՀԱՐՑՈՎ 19.10.2019թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ (ՀԱՄԱԼՐՎԱԾ)

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })